ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

——— ——————— 2010թ. N……Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 656 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) Որոշման 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարության, Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության» բառերով,

2) որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգում՝

ա. 5-րդ կետում «համայնքներին ու մարզպետներին (Երևանում՝ Երևանի քաղաքապետին և թաղապետերին)» բառերը փոխարինել՝ «համայնքների ղեկավարներին ու մարզպետներին» բառերով.

բ. 9-րդ և 10-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«9. Համայնքի ղեկավարը կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցնում է համայնքի ավագանու և Հայաստանի Հանրապետության

կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման (Երևանի քաղաքապետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի) հետ և ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 10-ը ներկայացնում համապատասխան մարզպետին (բացառությամբ Երևանի քաղաքապետի)։

10. Մարզպետը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված համակարգչային ծրագրավորման միջոցով ամփոփում է համայնքների ղեկավարների ներկայացրած հողային հաշվեկշիռները՝ ընդգրկելով նաև համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող մարզի վարչական սահմաններում առկա հողերը, կազմում մարզի հողային հաշվեկշիռը, իսկ Երևանի քաղաքապետը ամփոփում է Երևան քաղաքի հողային հաշվեկշիռը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ, և ոչ ուշ քան մինչև յուրաքանչյուր տարվա օգոստոսի 1-ը թղթային տեսքով, ինչպես նաև էլեկտրոնային կապի միջոցներով ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե։»։

գ. 11-րդ կետում «մարզպետների» բառից հետո լրացնել «և Երևանի քաղաքապետի» բառերը, «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարության ու Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության» բառերով, իսկ «սեպտեմբերի» բառը փոխարինել «հոկտեմբերի» բառով.

դ. 12-րդ կետում՝ «(թաղապետերը, մարզպետները, Երևանում՝ Երևանի քաղաքապետը)» բառերը փոխարինել՝ «և մարզպետները» բառերով։

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի նախագահ ***Երվանդ Զախարյան***

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 656 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. <u>Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)</u>

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» նախագծի ընդունման նպատակը որոշման համապատասխանեցումն է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և գործող օրենսդրությանը։

1.1. <u>կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները</u>

Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման մեջ առկա են հետևյալ խնդիրները՝

ա/ Ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման՝ Երևանի թաղապետերը որպես թաղային համայնքների ղեկավարներ Երևանի քաղաքապետին են ներկայացնում թաղային համայնքների յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշիռները, սակայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, ներկայումս Երևան քաղաքը դարձել է համայնք, Երևանի

քաղաքապետը՝ համայնքի ղեկավար, իսկ թաղային համայնքները դարձել են վարչական շրջաններ և հողային հաշվեկշիռ պետք է կազմի միայն Երևանի քաղաքապետը։

բ/ Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ նշված՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարությունը վերակազմակերպվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության և ՀՀ քաղաքաշինության նախարարության, իսկ Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի հուշարձանների վարչությունն ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կազմում։

գ/ Հայաստանի Հանրապետության մարզպետների և Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված հողային հաշվեկշիռների ամփոփումը և Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռի համաձայնեցումը շահագրգիռ նախարարությունների հետ փաստացի ավելի մեծ ժամանակ է պահանջում, քան որոշմամբ ամրագրված մեկ ամիսն է /օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը/։

Հաշվի առնելով վերոգրյալները, գտնում ենք, որ անհրաժեշտ է նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և լրացում։

1.2. <u>առկա խնդիրների առաջարկվող լուծումները</u>

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունմամբ տվյալ որոշման պահանջները համապատասխանեցվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, իսկ նախարարությունների նախկին անվանումները՝ առկա անվանումներին։ Որորշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգի 9-րդ կետը գրվում է նոր խմբագրությամբ և 10-րդ կետում լրացվում է «իսկ Երևանի քաղաքապետը ամփոփում է Երևան քաղաքի հողային հաշվեկշիռը»

նախադասությունը, քանի որ Երևան քաղաքը դարձել է համայնք, չի ընդգրկված որևիցէ մարզի վարչական տարածքում և Երևան քաղաքի հողային հաշվեկշիռը կազմելուց հետո, Երևանի քաղաքապետը նախ պետք է համաձայնեցնի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, այլ ոչ թե Կոմիտեի տարածքային ստորաբաժանումների հետ, քանի որ ք. Երևանում Կոմիտեն ունի 9-ը տարածքային ստորաբաժանումներ և միայն Կոմիտեն կարող է ամփոփել նախորդող մեկ տարվա ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները և համեմատել Երևանի քաղաքապետի ներկայացրած ընթացիկ հաշվեկշռի հետ: Դրանից հետո Երևանի քաղաքապետը այն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ է համաձայնեցնում և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության մարզպետների և Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված հողային հաշվեկշիռների ամփոփումը և Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռի համաձայնեցումը շահագրգիռ նախարարությունների հետ փաստացի ավելի մեծ ժամանակ է պահանջում, քան ամրագրված է որոշմամբ, ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման մեջ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացման ժամկետը երկարաձգել մինչև հոկտեմբերի 1-ը:

2. *<u>Կարգավորման առարկան</u>*

Որոշմամբ կկարգավորվի Հայաստանի Հանրապետության մարզպետների և Երևանի քաղաքապետի կողմից յուրաքանչյուր տարի ներկայացվող հողային հաշվեկշիռների սահմանված կարգով և նշված ժամկետում ամփոփումը, ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:

3. *<u>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը</u>*

Հայաստանի Հանրապետության, այդ թվում նաև Երևան քաղաքի ամենամյա հողային հաշվեկշիռները կկազմվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան։

Ե. Զախարյան